

**ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՁԵՒՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ  
ՊԱՏԵՐԱԳՉՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ**

*Բանալի բառեր՝ Թուրքիայի Հանրապետություն, Երկրորդ համաշխարհային պատերազմ, Իսմէթ Ինոնյու, Շուքրու Սարաջողու, Նուման Մենեմենջիօղլու, արտաքին քաղաքականություն, դիվանագիտություն*

Երկրորդ համաշխարհային պատերազմի բռնկման հետևանքով տեղի ունեցած աշխարհաքաղաքական լուրջ վերադասավորումներն արտացոլում գտան նաև Թուրքիայի Հանրապետության արտաքին քաղաքականության վերաիմաստավորման և գերակայությունների ու առաջնահերթությունների հստակեցման համայնապատկերում: Հաշվի առնելով Թուրքիայի աշխարհագրական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, ինչպես նաև տարածաշրջանային կշիռը՝ Երկրորդ աշխարհամարտի սկզբում պատերազմող հիմնական կողմերից յուրաքանչյուրը ջանք չէր խնայում իր կողմը քաշել Թուրքիային: Այս նպատակի կարևորությունն էլ ավելի սրվեց ռազմական գործողությունների հետագա ծավալման ընթացքում, որի հետևանքով Թուրքիայի արտաքին քաղաքականության ուղենշողները պատերազմի ընթացքում բազմաթիվ դեպքերում կանգնեցին երկրնստրանքի առջև, պատերազմող կողմերից որևէ մեկին հստակ և գործուն աջակցություն ցուցաբերելու նախ խնդրանքների, սպա նաև հորդորների, պահանջների և նույնիսկ սպառնալիքների դեմ հանդիման: Չնայած բազմաթիվ այդ ճնշումներին, Թուրքիան պատերազմի ընթացքում հռչակեց չեզոքություն, որը, ինչպես կտեսնենք հաջորդիվ, ունեցավ բազմաթիվ շեղումներ, բայց դրա հետ մեկտեղ հռչակված այդ քաղաքականության շնորհիվ այդ երկիրը կարողացավ խուսափել հակամարտող որևէ կողմից ներքաշվել պատերազմական գործողությունների մեջ:

Հատկանշական է, որ Երկրորդ աշխարհամարտում Թուրքիայի որդեգրած արտաքին քաղաքականությունը բնութագրվում է երկու հիմնական՝ միմյանց հակադրվող եզրերով՝ պասիվ, սպասողական, որը ստացավ «Սպասիր և տես» (*թուրքերեն՝ Bekle ve Gör*) ձևակերպումը, մյուսը կոչվեց «Ակտիվ չեզոքություն», որին մանրամասն անդրադարձել է

<sup>1</sup> ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի ասպիրանտ, էլ. փոստ՝ haykdarbinyan93@gmail.com

թուրք պատմաբան Սելիմ Դերինգիլն իր աշխատությունում<sup>2</sup>: Մեր կարծիքով՝ վերջին ձևակերպումն առավել բնութագրական և նպատակահարմար է Երկրորդ աշխարհամարտի ընթացքում Թուրքիայի որդեգրած արտաքին քաղաքականությունը դիպուկ բանաձևելու տեսանկյունից<sup>3</sup>:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Թուրքիայի որդեգրած այս քաղաքականության ձևավորման դրդապատճառների մասին առավել համապարփակ պատկերացում կազմելու տեսանկյունից հարկ ենք համարում անդրադառնալ հիմնական գործոնների, որոնք, մեր կարծիքով, ունեցել են առանցքային դերակատարություն.

1. Որոշումների կայացման շրջանակում ներառված անձանց քաղաքական ինքնություն:
2. Թուրքիայի հասարակական լայն շրջանակների գաղափարական-արժեհամակարգային նախապատվություններ և բարդությունը<sup>4</sup>:

1938 թ. նոյեմբերի 10-ին Աթաթյուրքի մահից հետո Թուրքիայում որոշումների կայացման առանցքը ձևավորվեց նրա մերձավորագույն ընկեր, զինակից Իսմեթ Ինոնյուի շուրջ: Այս ժամանակաշրջանը համընկավ նաև աշխարհաքաղաքական վերադասավորումների հետ, որոնք նախորդեցին Երկրորդ համաշխարհային պատերազմի մեկնարկին: Արձանագրենք, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին և դրա ընթացքում Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականության հարցերում որոշումների կայացման և առաջնահերթությունների ուրվագծման գործընթացին մասնակից են եղել սահմանափակ քանակությամբ անձինք, որոնք նաև կրել են դրանց կենսագործման պատասխանատվությունը: Այդ անձանց կենսագրությունը, քաղաքական նախապատվությունները, ինչպես նաև գաղափարական կողմնորոշումները թեև փոխկապակցված էին բազմաթիվ առումներով, միևնույն ժամանակ ունեին նաև որոշակի տարբերություններ, և ենթադրելի է, որ դրանք անմիջական

<sup>2</sup> **Deringil S.**, “*Turkish Foreign Policy During the Second World War: An “Active” Neutrality*”, Cambridge, 1989.

<sup>3</sup> Հատկանշական է, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Թուրքիայի արտաքին քաղաքականության բնութագրումներից մեկն էլ ոչ ռազմատենչությունն է, որը մեր կարծիքով ևս դիպուկ է արտահայտում նշված ժամանակահատվածում Թուրքիայի արտաքին քաղաքականությունը՝ **Oran B. (edt.)**, “*Turkish Foreign Policy: 1919-2006*”, Utah, 2011, pp. 238-238:

<sup>4</sup> Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Թուրքիայի որդեգրած արտաքին քաղաքականության ձևավորման գործում ոչ պակաս կարևորություն ուներ պատերազմին նախորդած ժամանակաշրջանում և դրա ընթացքում Թուրքիայում տիրող սոցիալ-տնտեսական իրավիճակը, որը կարելի է համարել առանձին ուսումնասիրության արժանի առարկա:

ազդեցություն են ունեցել պատերազմի ընթացքում Թուրքիայի որդեգրած «Ակտիվ չեզոքություն» քաղաքականությանը նախապատվություն տալու և այն իրագործելու վրա: Այս առումով անհրաժեշտ է անդրադառնալ նրանցից յուրաքանչյուրի քաղաքական գործունեությանը և միմյանց միջև առկա ընդհանրություններին ու դրսևորվող տարբերություններին:

Երկրորդ աշխարհամարտի ընթացքում Թուրքիայում որոշումների կայացման իրավունքը վերապահված էր վարչապետի, արտաքին գործերի նախարարության և Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովի ինստիտուտներին, որոնք համակարգում էր նախագահը: Պատերազմի ողջ ընթացքում Թուրքիայի Հանրապետության նախագահի պարտականությունները կատարել է Իսմեթ Ինոնյուն, որը աշխատել է այդ ընթացքում գործած երեք կառավարությունների և երկու վարչապետների հետ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբից մի քանի ամիս առաջ՝ 1939 թ. հունվարին դեռևս Օսմանյան կայսրությունում բժշկական կրթություն ստացած Ռեֆիկ Սայդամը, որը նախկինում զբաղեցրել էր նաև Թուրքիայի Հանրապետության առողջապահության նախարարի պաշտոնը, ստանձնեց Թուրքիայի չորրորդ վարչապետի պարտականությունները: Սայդամը համարվում է Երկրորդ համաշխարհային պատերազմում Թուրքիայի որդեգրած չեզոք քաղաքականության հիմնական ջատագովներից մեկը: Երբ նախագահ Ինոնյուն նրան առաջարկել է ստանձնել կառավարության ղեկավարի պարտականությունները, Սայդամը պատասխանել է. «*Փաշա* (նկատի ունի Իսմեթ Ինոնյուին, - Հ. Դարբինյան), *ես այս ժողովրդին նորից պատերազմի չեմ տանի: Վարչապետի պաշտոնը կարող եմ ընդունել միայն պայմանով, որ պատերազմին չեմք մասնակցելու»*<sup>5</sup>: Ինոնյուն ընդունել է Սայդամի այս պայմանը՝ նրան նշանակելով վարչապետի պաշտոնում: Սայդամը յուրջ ջանքեր է գործադրել նաև պատերազմի ընթացքում Թուրքիայի սոցիալ-տնտեսական կայունությունն ապահովելու ուղղությամբ<sup>6</sup>: Դեռևս ազգայնամոլական շարժման սկզբից Աթաթյուրքի

<sup>5</sup> **Metintaş M., Kayıran M.**, “*Refik Saydam Hükümetleri Döneminde Türkiye'nin Dış Politikası (1939-1942)*”, Fırat Üniversitesi Sosyal Bilimler Dergisi, Cilt 21(1) 2011, s. 290, <https://dergipark.org.tr/tr/download/article-file/715860> (թրք.՝ հասանելի էր 22.02.2020).

<sup>6</sup> Այս մասին առավել մանրամասն տես՝ **Metintaş M., Kayıran M.**, “*Refik Saydam Hükümetleri Döneminde Türkiye'nin Ekonomi Politikası (1939- 1942)*”, Eskişehir Osmangazi Üniversitesi Sosyal Bilimler Dergisi, Cilt 9(2), 2008, ss. 155-184, <https://dergipark.org.tr/tr/download/article-file/113201>, (թրք.՝ հասանելի էր 22.02.2020), **Aydın İ., Kapıcı H.**, “*II. Dünya Savaşı'na Giriş Sürecinde Türkiye'nin Aldığı İç Politika Tedbirleri*”, Cilt

ամենամտերիմ զինակիցներից մեկը համարվող Մայդամը պաշտոնավարեց մինչև մահ՝ 1942 թվականի հուլիսի 8-ը:

1942 թ. Թուրքիայի Հանրապետության 5-րդ վարչապետ նշանակվեց Շուքրու Սարաջօղլուն<sup>7</sup>: Մինչև վարչապետի պարտականությունները ստանձնելը, 1938-1942 թթ. Սարաջօղլուն զբաղեցնում էր Թուրքիայի ԱԳ նախարարի պաշտոնը: Երբ Սարաջօղլուն նշանակվեց վարչապետ, արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարի պաշտոնը վստահվեց ԱԳ նախարարության գլխավոր քարտուղար Նուման Մենեմենջիօղլուին, որին 1944 թ. աշնանը փոխարինեց Հասան Սաքան:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակահատվածում մեծամասամբ հենց Սարաջօղլուի եւ Մենեմենջիօղլուի գործունեությունն է, որ ստիպում է Թուրքիայի վարած քաղաքականությունը բնութագրել որպես «Ակտիվ չեզոքություն», որը, մեր կարծիքով, մի շարք դեպքերում շեղվում է նաև այդ ձևակերպումից, որովհետև Թուրքիան երբեմն ոչ բացեփրաց, բայց ակնհայտ համակրանք էր դրսևորում ֆաշիստական Գերմանիայի հանդեպ՝ գործնականում շեղվելով իր որդեգրած չեզոքության սկզբունքից: Այս երկու անձանց գործունեությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում արդարացիորեն փոխկապակցվում է Թուրքիայում պանթյուրքիստական տրամադրությունների տարածման հետ: Պատերազմի ընթացքում Թուրքիայում Գերմանիայի դեսպան Ֆրանց Ֆոն Պապենի հետ զրույցներից մեկում Սարաջօղլուն դեսպանին ասել է. *«Թուրքիան չի կարող անտարբեր մնալ Ռուսաստանում բնակվող շուրջ 40 միլիոն թյուրքական ծագում ունեցող բնակչության հանդեպ: Չնայած այդ տարածքների (նկատի ունի Խորհրդային Միության այն շրջանները, որտեղ բնակվում էին թյուրքական ծագում ունեցողները, - Հ. Դարբինյան) միատրորումը Թուրքիայի հետ դժվար իրականանալի է, բայց այնուամենայնիվ, այդ տարածքները կարող են վարչական ինքնակառավարում ստանալ, որոնք ուժեղ մշակութային կապ կունենան Թուրքիայի հետ»*<sup>8</sup>: Սարաջօղլուն ջերմ հարաբերություններ ուներ

32(45), 2018, ss. 109-130, <https://dergipark.org.tr/tr/download/article-file/614439>, (թրք.՝ հասանելի էր 22.02.2020):

<sup>7</sup> Վարչապետ Ռեֆիկ Մայդամի մահից հետո՝ մինչև նոր կառավարության ձևավորումը, 2 օր Թուրքիայի վարչապետի պարտականությունները կատարել է ներքին գործերի նախարար Ահմեդ Ֆիքրի Թյուգերը:

<sup>8</sup> Documents on German Foreign Policy 1918–1945. Series D. Vol. 13: The War Years: June 23, 1941–December 11, 1941, , Her Majesty's Stationery Office, 1964, p. 632-633.

նախագահ Ինոնյուոի հետ, որոնք գործնականից զատ դրսևորվում էին նաև անձնական շփումներում<sup>9</sup>:

Վերևում մեջբերված հայտարարությունից զատ, Շուքրու Սարաջողուն վարչապետի պաշտոնը զբաղեցրած ժամանակահատվածում առանց դիվանագիտական այլևայլությունների Թուրքիայի Ազգային մեծ ժողովում իր ելույթներից մեկում բացեիբաց հայտարարել է, որ պանթուրքիստական գաղափարախոսությունը թուրք ժողովրդի ինքնության բաղկացուցիչն է. «Մենք թուրքեր ենք, մենք պանթուրքիստ ենք և միշտ մնալու ենք պանթուրքիստներ: Պանթուրքիզմը մեր այլևս եւ նույնիսկ ավելին՝ մեր խղճի եւ մշակույթի մեջ է»<sup>10</sup>:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին առանցքային էր նաև 1942-1944 թ. Թուրքիայի ԱԳ նախարարի պաշտոնը զբաղեցրած Նուման Մենեմենջիօղլուի դերակատարությունը, որը էական ազդեցություն է ունեցել պատերազմի ընթացքում Թուրքիայի արտաքին քաղաքականության ձևավորման գործում<sup>11</sup>: Օսմանյան կայսրության ֆինանսների նախարարի պաշտոնը զբաղեցրած Մենեմենլիզադե Ռեֆաթ բեյի որդի Մենեմենջիօղլուն դիվանագիտական տարբեր պաշտոններ էր զբաղեցրել եվրոպական մի շարք երկրներում: Թեև Մենեմենջիօղլուն Սարաջողուի հետ միասին լուրջ դերակատարություն են ունեցել պատերազմի ընթացքում Թուրքիայում պանթուրքիստական տրամադրությունների և ֆաշիստական Գերմանիայի հանդեպ Թուրքիայի որոշակի շրջանակներում առկա համակրանքի տարածման գործում<sup>12</sup>, որոշ ուսումնասիրողներ հակված են կարծել, որ Ինոնյուն և Մենեմենջիօղլուն հստակ գիտակցում էին, որ ընթացող պատերազմը եվրոպական երկրների շահերի բախման հետևանք է և համարում էին,

<sup>9</sup> Սարջողուն համարվում էր Ինոնյուոի շախմատային հիմնական խաղընկերը, որը վկայում է նաև նրանց միջև հաստատված ջերմ ընկերական հարաբերությունների մասին:

<sup>10</sup> **Oran B.**, “*İç ve Dış Politika İlişkisi Açısından İkinci Dünya Savaşında Türkiye’de Siyasal Hayat ve Sağ-Sol Akımlar*”, Ankara Üniversitesi Siyasal Bilgiler Fakültesi Dergisi, Cilt 24(3), 1969, s. 251, [https://www.academia.edu/10327659/%C4%B0%C3%A7\\_ve\\_D%C4%B1\\_%C5%9F\\_Politika\\_%C4%B0li%C5%9Fkisi\\_A%C3%A7%C4%B1s%C4%B1ndan\\_%C4%B0kinci\\_D%C3%BCnya\\_Sava%C5%9F%C4%B1nda\\_T%C3%BCrkiyede\\_Siyasal\\_Hayat\\_ve\\_Sa%C4%9F-Sol\\_Ak%C4%B1mlar\\_1969\\_\(թրք.\)\\_հասանելի\\_էր\\_01.03.2020](https://www.academia.edu/10327659/%C4%B0%C3%A7_ve_D%C4%B1_%C5%9F_Politika_%C4%B0li%C5%9Fkisi_A%C3%A7%C4%B1s%C4%B1ndan_%C4%B0kinci_D%C3%BCnya_Sava%C5%9F%C4%B1nda_T%C3%BCrkiyede_Siyasal_Hayat_ve_Sa%C4%9F-Sol_Ak%C4%B1mlar_1969_(թրք.)_հասանելի_էր_01.03.2020).

<sup>11</sup> **Gökay B.**, “*Soviet Eastern Policy And Turkey, 1920-1991*”, New York: Routledge, 2006, s. 52.

<sup>12</sup> **Çalış Ş., Söker Ç.**, “*Turkish Foreign Policy During the Second World War: Neutrality, Diplomacy and Statecraft*”, Selçuk Üniversitesi Türkiyat Araştırmaları Dergisi, Sayı 47, 2019, s. 452, **Червонная С., Глязов И., Горошков Н.**, “*Тюркизм и пантюркизм, Ас-Алан*”, №1(10), 2003, сс. 237-285, <https://static1.squarespace.com/static/5ad20f381137a64e3d3f56a2/5ad37261352f53c87a2daed0/1523807083875/AsAlan1%2810%29.pdf>, (nmu.՝ հասանելի էր 23.02.2020).

որ Թուրքիայի անմիջական ներգրավվածությունը ռազմական գործողություններին չի բխում Թուրքիայի շահերից<sup>13</sup>:

Վերը հիշատակված անձինք, որոնք ամենաառաջնային դերակատարությունն են ունեցել Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի արտաքին քաղաքականության ձևավորման և իրականացման գործում, իրենց մեջ կրում էին նաև Օսմանյան կայսրության վերջին ժամանակահատվածի՝ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում թուրքական էլիտայի շրջանում ձևավորված բարդություններն ու պատկերացումները, որոնք, վերջիվերջո, հստակորեն արտացոլվեցին նաև Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում նրանց քաղաքական նախընտրությունների և առաջնահերթությունների ընտրության գործում: Ի թիվս թվարկվածների, նշված անձանց քաղաքական ինքնության ձևավորման գործում պակաս կարևոր չէր նաև քեմալիզմի գաղափարական պատկերացումների գործոնը, որը արտաքին քաղաքականության համար սահմանել էր «Խաղաղություն էրկրում, խաղաղություն աշխարհում» (թրք.՝ *Yurtta sulh, cihanda sulh*) բանաձևը. «*Որոշելու համար, թե որ կողմին էր Թուրքիան ավելի մոտ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում, պետք է պատկերացում կազմել անկախության պատերազմի և մինչպատերազմյան ժամանակահատվածի մասին: Ավելին, պետք է մանրակրկիտ ուսումնասիրել Աթաթյուրքի ժառանգության ազդեցությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության վրա, որովհետև կադրերը, որոնք ղեկավարել են Թուրքիան Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում, խորասլուս ազդիված են եղել Աթաթյուրքի սկզբունքներից և հավատարիմ են մնացել նրա ժառանգությանը*»<sup>14</sup>:

Երկրորդ աշխարհամարտի ընթացքում Թուրքիայի արտաքին քաղաքականության ձևավորման գործում էական էր նաև մեր կողմից նշված երկրորդ՝ երկրի հասարակական լայն շրջանակների ունեցած գաղափարական-արժեհամակարգային նախապատվություններն ու բարդությունները: Այստեղ անհրաժեշտ է, սակայն, արձանագրել, որ եթե ստորերը երկրներում առկա ներհասարակական տրամադրությունները

<sup>13</sup> İlyas A., Turan O., “İnönü Dönemi Türk Dış Politikası”, Atatürk Üniversitesi Atatürk İlkeleri ve İnkılap Tarihi Enstitüsü Atatürk Dergisi, Cilt 1(1), 2012, s. 338, <https://dergipark.org.tr/en/download/article-file/26201>, (թրք.՝ հասանելի էր 23.02.2020).

<sup>14</sup> Özden H., “The Diplomatic Maneuvers of Turkey in World War II”, Karadeniz Araştırmaları Dergisi, Sayı 37, 2013, s. 92, [http://www.karam.org.tr/Makaleler/1804563348\\_Hakan%20Ozden.pdf](http://www.karam.org.tr/Makaleler/1804563348_Hakan%20Ozden.pdf), (թրք.՝ հասանելի էր 23.02.2020). Նույն թեմայով տե՛ս նաև՝ Cooper M., “The legacy of Atatürk: Turkish political structures and policy-making”, International Affairs, Vol. 78(1), 2002, pp. 115-128.

շատ հաճախ ազդում են արտաքին քաղաքականության ձևավորման վրա, ապա Թուրքիայում իշխանության վերնախավն ակտիվորեն ուղղորդում էր այդ տրամադրությունները, այդ կերպ ներքին հենարան ստեղծելով պատերազմի ընթացքում կողմերից որևէ մեկին աջակցելու, կամ հակառակը՝ հակոտնյա քաղաքականության վարելու համար:

Մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի կարևորագույն իրադարձություններից մեկը համարվող Ստալինգրադի ճակատամարտը Թուրքիայի հասարակական շրջանակներում ակտիվորեն տարածվում էր ազգայնական և պանթուրքիստական գաղափարախոսությունը: Հասկանալի էր, որ գաղափարական այս հոսանքի համար առավել ընկալելի էր ֆաշիստական Գերմանիայի քաղաքականությունը, որի հանդեպ համակրանք էին տածում թուրքական ազգայնական հոսանքի մի շարք ներկայացուցիչներ: Պատերազմի ընթացքում Թուրքիայում ազգայնականության տարածման գործում էական դերակատարություն ունեցող թուրք գրող, պատմաբան Նիհալ Աթաբզը, որը Չիա Գյոքալիի հետ համարվում է թուրքական ազգայնականության հոսանքի ամենակարկառուն ներկայացուցիչներից<sup>15</sup>: Թուրքիայում ազգայնական և պանթուրքիստական գաղափարախոսության ամենավառ ներկայացուցիչներից էր նաև Ալիարալան Թյուրքեշը, որը Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած ժամանակաշրջանում ևս հսկայական ներդրում ունեցավ ծայրահեղ ազգայնական հոսանքների ծավալման գործում և մինչ օրս համարվում է այդ ոլորտի ամենանշանավոր գործիչներից մեկը<sup>16</sup>:

Չնայած Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Թուրքիայում լայնորեն տարածված ազգայնական և պանթուրքիստական գաղափարախոսության առկայությանը, որի հանդեպ ծածուկ, երբեմն էլ՝ ակնհայտ համակրանք էին արտահայտում նաև իշխանության ամենաբարձրաստիճան ներկայացուցիչները, պատերազմի ավարտին

<sup>15</sup> Այս մասին առավել մանրամասն տե՛ս՝ **Erdoğan T., Murat Y.**, “*Tanzimattan Bu Güne Edebiyatçılar Ansiklopedisi*”, İstanbul: Yapı Kredi Yayınları, 2001, s.145 (1172 էջ): Աթաբզը երկար տարիներ զբաղվել է նաև մանկավարժական գործունեությամբ և կարևոր ներդրում է ունեցել Թուրքիայում ազգային կրթության ձևավորման և տարածման գործում: Այս մասին առավել մանրամասն տե՛ս՝ **Güntürk S., Berber Ş.**, “*Hüseyin Nihal Atsız’ın Eğitim Görüşleri*”, 21. Yüzyılda Eğitim Ve Toplum Eğitim Bilimleri Ve Sosyal Araştırmalar Dergisi, Cilt 8(23), 2019, s. 313–324, <https://dergipark.org.tr/tr/download/article-file/860251> (թրք.՝ հասանելի էր 20.03.2020):

<sup>16</sup> Թուրքիայում ազգայնականության և պանթուրքիստական գաղափարախոսության զարգացման և տարածման գործում Թյուրքեշի ունեցած ներդրման մասին առավել մանրամասն տե՛ս՝ **Sarıkaya Y., Aksu İ.**, “*Doğumunun 100. Yıl Dönümünde Lider Türkiye İçin Alparslan Türkeş Vizyonu*”, Türk Akademisi Siyasi Sosyal Stratejik Araştırmalar Vakfı (TASAV), Ankara 2018.

նախորդող ժամանակաշրջանում, երբ արդեն ուրվագծվում և հասկանալի էր դառնում Գերմանիայի և նրա դաշնակիցների մոտալուտ պարտությունը, Թուրքիայում աննախադեպ ճնշումներ սկսվեցին պանթուրքիստական հայացքներ ունեցող գործիչների հանդեպ<sup>17</sup>: Թեև, պատերազմի գերակշիռ ժամանակահատվածում Թուրքիայում հասարակության տարբեր ենթաշերտերում նկատվող ազգայնական տրամադրությունները, ճնշվեցին 1944-1945 թթ. ընթացքում, բայց դրանք էական ազդեցություն ունեցան Թուրքիայում Խորհրդային Միության հանդեպ ընդգծված համակրանք չառաջանալու գործում:

Երկրորդ աշխարհամարտից հետո ընդամենը մի քանի տասնամյակների ընթացքում Թուրքիայում հատունացավ արտաքին քաղաքականության ասպարեզում «փափուկ» ուժի և հանրային դիվանագիտության մշակման ու կիրառման կարեւորության ընկալումը, որը գործնական կիրառություն ստացավ Սառը պատերազմի ավարտից հետո և հատկապես «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության առաջին տարիներին:

## FACTORS OF FORMATION OF THE TURKISH FOREIGN POLICY DURING THE SECOND WORLD

*Hayk Darbinyan*  
(Summary)

The geopolitical realignments that took place as a result of the outbreak of the Second World War were reflected on the reconceptualization of the foreign policy of the Republic of Turkey. This created new perceptions of the priorities for the Turkish behavior in international arena. Taking into the consideration Turkey's geographical, political, socio-economic, as well as regional role, each of the actors of the War spared no effort to involve Turkey to their side, at the beginning of World War II. This article reflects and elaborates on the main factors that help creating a comprehensive knowledge on the motives for the formation of the foreign policy adopted by Turkey during the Second World War.

<sup>17</sup> Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Թուրքիայում ազգայնական հայացքներ ունեցող գործիչների հանդեպ կիրառված ամենազանգվածային ճնշումը համարվում է 1944 թ. սեպտեմբերից մինչև 1945 թ. մարտի վերջը տևած դատավարությունը, որի հետևանքով Թուրքիայում ազգայնական հայացքներ ունեցող 23 անձ՝ նրանց թվում Աթաթըրք և Թյուրքեշը, դատապարտվեցին տարբեր մեղադրանքներով: Այս դատավարությունը լայնորեն յուսաբանվել է նաև թուրքական մամուլում, որի մասին առավել մանրամասն տե՛ս՝ **Öztekın H.**, “1944 Irkçılık - Turancılık Davası ve Basındaki Tartışmalar”, Selçuk İletişim Dergisi, Cilt 11(1), 2018, s. 212-236, <https://dergipark.org.tr/en/download/article-file/414737> (թրք. հասանելի էր 20.03.2020):